

ՄԵԿՆՈՒՄ ՖՐԱՆԿՖՈՒՐՏ

Մայիսի 5-ին, երեքշաբթի օրը, ժամը 14-ին, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Իր շքախմբի, Մյունխենից օդանավով մեկնում է Ֆրանկֆուրտ:

Օդակայանում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ մաղթելու էին եկել եկեղեցական վարչության և համայնքային այլ կազմակերպությունների անդամները, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ և բազմաթիվ մյունխենահայեր:

Ժամը 15-ին օդանավը վայրէջք է կատարում Մայնի Ֆրանկֆուրտում:

Օդակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել Տ. Արիս եպս. Շիրվանյանը, Տ. Հակոբ վրդ. Գըլընճյանը, համայնքային վարչության անդամները՝ գլխավորությամբ պատվո ատենապետ Խաչիկ Ցաղջյանի և ատենապետ Կարպիս Բոյաջյանի, մշակութային վարչության անդամները և բազում ֆրանկֆուրտահայեր:

Այստեղ Վեհափառ Հայրապետի ժամանումը ողջունելու էին եկել նաև կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչ պրոֆ., դոկտ. Գրիլմայերը, լութերական Եկեղեցու ներկայացուցիչ դոկտ. Օմերը և քույր Եկեղեցիների այլ ներկայացուցիչներ:

Օդակայանի ասուլիսի սրահում Վեհափառ Հայրապետին ուղղված ողջույնի և բարիգալստյան հետևյալ խոսքն է արտասանում Տ. Հակոբ վրդ. Գըլընճյանը.

«Վեհափառ Տեր,

Անսահման է այս պահին մեր ուրախությունը, քանի որ Դուք, որպես Ամենայն Հայոց Հայրապետ, հաճեցիք այցելել Հեսընի մեր փոքրիկ համայնք՝ մխիթարելու մեզ այս օտարության մեջ և մի անգամ ևս ապահովելու, թե մենք այստեղ լքված մի հոտ չենք, այլ հարազատ զավակները հայության և նրա Սրբության Սրբոց աստվածախորհուրդ Էջմիածնի:

Դուք, որպես արժանավոր հաջորդ Թադեոս և Բարթողիմեոս առաքյալների, ահավասիկ 25 տարիներից ավելի Ձեր անձնվեր գործունեությամբ սիրելի դարձաք թե՛ հայրենիքի և թե՛ սփյուռքի հայությանը՝ տալով մեզ քաջ հայի և անձնդիր հովվի կենդանի օրինակ: Արդեն վաղուց է, որ Ձեր ազգաշեն ջանքերի արդյունքը Ձեր փառքի վեհության խոսուն վկան է դարձել:

Դուք մեր մեջ եք այսօր, Դուք, որ գալիս եք հայրենյաց հողից, որ մեր նահատակների արյամբ է սրբագործված, Դուք, որ բերում եք մեզ աստվածադրոշմ հավերժական հետքեր կրող Ս. Էջմիածնի բույրը, Դուք, որ մեր հայրենիքի մեջ ապրող մեր եղբայրների հայկական շունչն էլ բերում եք մեզ՝ կարող եք երևակայել այս իսկ պատճառով, թե ի՞նչ մեծ նշանակություն ունի այսօր Ձեր ներկայությունը այստեղ, մանավանդ որ մեր համայնքի անդամների մեծամասնությունը արևմտյան բռնագրավված Հայաստանի վտարանդի և իրավազրկված բեկորներից է կազմված:

Երախտապարտ մնալու համար Ձերդ Սրբության կողմից մեզ շնորհված պատվին՝ լավագույնը պետք է լինի մի անգամ ևս Ձեր առաջ նորոգել մեր հավատարմության ուխտը հայրենիքի և Ս. Էջմիածնի նկատմամբ:

Մեր ողջ ջանքերն ու հոգնությունները Ձերդ Սրբության այցելության հետ առնչված հարցերը մեր ուժերի ներածին չափով լավագույնս կարգադրելու համար ոչինչ է երևում մեր աչքին, քանի որ, Ավետարանի խոսքերի համաձայն՝ միայն «զոր ինչ պարտ էր մեզ առնել արարաք»:

Երկար ապրեք, Վեհափառ Տեր:

Երկնավոր Թագավոր, անսասան պահիր մեր Ս. Եկեղեցին»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի ժամանումը ողջունում են եկեղեցական վարչության ատենապետ Կարպիս Բոյաջյանը, մշակութային միության ատենապետ Պետրոս Չաքըրյանը և ուրիշներ:

Ապա Հայոց Հայրապետի հետ հարցազրույց են ունենում հեռուստատեսության, ռադիոյի և թերթերի մի շարք թղթակիցներ:

Շուրջ 45 րոպե տևող հարցազրույցից հետո Նորին Սրբությունը առաջնորդվում է Ֆրանկֆուրտի «Քրեստ» հյուրանոց:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, Հայոց Հայրապետը հյուրը եղավ Ֆրանկֆուրտի Հիսուսյանների Ս. Գևորգ դպրեվանքի, ուսանողության և դասախոսական կազմի, որտեղ կազմակերպվել էր հատուկ ընդունելություն՝ ի պատիվ Նորին Սրբության:

Դպրեվանքի սեղանատանը տրված ճաշկերույթի ժամանակ Հայոց Հայրապետին ողջունում են ճեմարանի տեսուչ դոկտ. Լյուդվիգ Բերչը և վանահայր պրոֆ., դոկտ. Գրիլմայերը:

Այնուհետև, վանքի մատուռի մեջ տեղի ունեցող էկումենիկ աղոթքից հետո, քարոզ է խոսում Հայոց Հայրապետը՝ Իր խոսքը ուղղելով հատկապես ներկա շուրջ հարյուր հիսուն ուսանողներին:

Վանքի շրջափակին ծանոթանալուց հետո ճեմարանի տեսուչ դոկտ. Լյուդվիգ Բերչը իր տեսչարանում մտերիմ զրույց է ունենում Հայոց Հայրապետի հետ, որի ընթացքում Հայոց Հայրապետը ծանոթանում է տեղի ճեմարանի ուսումնադաստիարակչական ծրագրերի և աշխատանքային մեթոդների հետ:

Հայոց Հայրապետը Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի մասին նույնպես տեղեկություններ է հաղորդում տեսուչ դոկտ. Լ. Բերչին:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԵՍԸՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայիսի 6-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Հայոց Հայրապետը Հեսընի նահանգի լութերական Եկեղեցու նախագահ դոկտ. Հիլդի հրավերով Ֆրանկֆուրտի «Քրիստ» եկեղեցում մասնակցում է էկումենիկ աղոթքի արարողության:

Աղոթքից հետո Հայոց Հայրապետի ներկայությունը ողջունում է լութերական Եկեղեցու նախագահ դոկտ. Հիլդը հետևյալ ելույթով.

«Ձերդ Սրբություն, սիրելի Եղբայր ի Քրիստոս...

Մենք ողջունում ենք Ձեզ իբրև քրիստոնեական հնագույն Եկեղեցու գերագույն պետի: Մենք գիտենք, թե Հայ Առաքելական Եկեղեցին մինչև մեր օրերը ինչպիսի՞ հիմնական նշանակություն է ունեցել հայ ժողովրդի ինքնության և միության համար, և թե ինչպիսի՞ ամրությամբ են արմատավորվել Եկեղեցին և քրիստոնեական հավատքը հայ ժողովրդի մեջ:

Հանձին Ձեզ, մենք տեսնում ենք մինչև մեր օրերը ծաղկող մի ազգային Եկեղեցու գերագույն պետին:

Մենք հանձին Ձեզ ողջունում ենք նաև տառապանքներում թրծված մի ժողովրդի Հայրապետի: 11-րդ դարից սկսյալ ձեր ժողովուրդը ոչ միայն հարկադրված էր ապրել, այլև նա մեր իսկ դարաշրջանում տեսավ, զգաց ոչնչացման փորձի ողբերգությունն ու ցեղասպանությունը: Մենք անցյալ տարի նշեցինք հայ ժողովրդի ցեղասպանության 65-րդ տարեդարձը: Մենք քաջ գիտենք, որ պատմության այս առաջին ցեղասպանությունը Ձեր ժողովրդից մեկուկես միլիոն զոհեր պահանջեց և Ձեր ժողովրդին անվերջանալի տառապանք բերեց: Եվ երբ անդրադառնանք առաջին համաշխարհային պատերազմի պատմությանը, պետք է ասենք, որ ժամանակի գերման կառավարությունը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հաճախ լռեց Թուրքիայում տեղի ունեցող կոտորածների մասին, և որոշակի դիրք չբռնեց երիտասարդ թուրքերի կողմից գործադրվող ոչնչացման քաղաքականության դեմ, և քաղաքական բարձր խորհրդածությունները, կշռադատումները մոռացության տվեցին պարտավորությունը՝ հանդես գալու հայ ժողովրդի կյանքի և իրավունքների պաշտպանությամբ:

Այժմ Սովետական Հայաստանը դարձել է ամբողջ հայ սփյուռքի հայրենիքը: Հայաստանը երկրի վրա միակ վայրն է, որտեղ հայերը այսօր կարող են միասնաբար ապրել, բնակչության 90 տոկոսից ավելին հայեր են և ամբողջ աշխարհի հայերը նայում են Հայաստանին, որպես իրենց օրրանը և իրենց հայրենիքը»:

Հայոց Հայրապետի ներկայությունը ողջունում է նաև կաթոլիկ Եկեղեցու եպիսկոպոս դոկտ. Կոմպեն:

Այնուհետև եղբայրական ջերմ ընդունելության համար շնորհակալական խոսքով հանդես է գալիս Հայոց Հայրապետը:

Ժամը 12-ին «Քրիստ» եկեղեցու սրահում Հայոց Հայրապետը շուրջ մեկժամյա հարցազրույց է ունենում գերմանական գլխավոր թերթերի թղթակիցների հետ, որի ընթացքում Նորին Սրբությունը հանգամանորեն պատասխանում է թղթակիցների տված հետևյալ հարցերին.

ա) Ո՞րն է հովվապետական այցելության նպատակը.

բ) Հայ Եկեղեցու ներկա վիճակը Հայաստանում և սփյուռքում,

գ) Գերմանահայ գաղութը.

դ) Հայ Եկեղեցու մասնակցությունը էկումենիկ շարժմանը.

ե) Հայ Եկեղեցու մասնակցությունը աշխարհի խաղաղության շարժմանը.

Ժամը 13-ին լութերական Եկեղեցու պետ դոկտ. Հիլդը «Հեսիշե Հոֆ» հյուրանոցի ռեստորանում կազմակերպում է ընդունելություն՝ ի պատիվ Հայոց Հայրապետի:

Ընդունելությանը ներկա են լինում նաև լութերական և կաթոլիկ Եկեղեցիների ներկայացուցիչներ:

Սեղանի շուրջ Հայոց Հայրապետի և լութերական Եկեղեցու նախագահ դոկտ. Հիլդի միջև փոխանակվում են ողջույնի ու բարեմաղթության ճառեր և հուշանվերներ:

ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԸ ՄԵԾԱՐՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Ժամը 15-ին լութերական Եկեղեցու արտաքին հարաբերությունների կենտրոնը իր սրահում, ի պատիվ Հայոց Հայրապետի, կազմակերպում է ընդունելություն, որին ներկա են լինում նաև հիշյալ կազմակերպության անդամներն ու քույր Եկեղեցիների ներկայացուցիչները:

Ընդունելության ժամանակ, որի հիմնական նյութը էկումենիկ հարցերն էին, խոսում են արտաքին հարաբերությունների կենտրոնի փոխպրեզիդենտ դոկտ. Կոխը, արևելյան Եկեղեցիների բաժնի քարտուղար դոկտ. Միքշոը և ուրիշներ:

Վերջում Իր օրհնության խոսքն է ասում Հայոց Հայրապետը և պատասխանում տրված մի շարք հարցերին:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, ֆրանկֆուրտաբնակ Գյուրելյան եղբայրները սեփական «Անդրե» հյուրանոցի ճաշասրահում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպում են ճաշկերույթ, որին ներկա են լինում շուրջ քսանհինգ հրավիրյալներ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Մայիսի 7-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Հայոց Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Ֆրանկֆուրտի քաղաքապետարան, որտեղ Նորին Սրբությանն ընդունում է փոխքաղաքապետ և ֆինանսների մինիստր դոկտ. Գերհարդը:

Հայոց Հայրապետի և հարգարժան պարոն մինիստրի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, որից հետո, ժամը 12-ին, քաղաքապետարանը «Ֆրանկֆուրտեր Հոֆ» հյուրանոցի ճաշասրահում կազմակերպում է ընդունելություն՝ ի պատիվ Հայոց Հայրապետի:

Ընդունելությունն անցնում է ջերմ և բարեկամական մթնոլորտում:

*
* *

Նույն օրը, ժամը 14-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է գերմանացի մեծ բանաստեղծ Գյոթեի տուն-թանգարան:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԵՍԻՆ-ՆԱՍԱՈՒ ՆԱՀԱՆԳԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ԴՈԿՏ ԳԵՐՀԱՐԴԸ, ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔՈՒՄ. ՖՐԱՆԿՖՈՒՐՏ

ՀԱՅԿԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ

Երեկոյան ժամը 17-ին Հանաուի կաթոլիկ Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, մատուցվում է ս. պատարագ:

Պատարագիչն է Ծիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Ծաքարյանը:

Ս. պատարագին ներկա են լինում հարյուրավոր հայ հավատացյալներ և քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը՝ նշելով, որ Քրիստոսի Հարության ավետիսը մեր հավատքն է, մեր ուրախությունը և փրկության ճանապարհը: Քրիստոնեական եկեղեցին հիմնված է Քրիստոսի Հարության այն հավատքի վեմի վրա, որ բաց է անում հորիզոնը հավիտենական կյանքի, որի ծարավը ունեն բոլոր դարերի բոլոր հավատացյալ հոգիները:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ՝ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, ժամը 20-ին, Հեսընի նահանգի համայնքային վարչությունը կազմակերպում է ողջերթի ընթրիք՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Ընթրիքին ներկա էին շուրջ երկու հարյուր հայ և օտար հրավիրյալներ:

Սեղանի շուրջ Վեհափառ Հայրապետին ողջունում են Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը, համայնքային վարչության ատենապետ Կարպիս Բոյաջյանը, Հայ-Գերմանական միության ներկայացուցիչ Արա Բերքյանը, գերմանախոս երկրների հայ միությունների նախագահ դոկտ. Ծավարշ Հովասափյանը, Ֆրանկֆուրտի լութերական Եկեղեցու արտաքին հարաբերությունների բաժնի ներկայացուցիչ դոկտ. Միքշին և ուրիշներ:

Այնուհետև իր «Առ առաքելաշնորհ Գահակալն» բանաստեղծությունն է կարդում օրիորդ Քրիստին Ավգերոզլույանը:

ԱՌ ԱՌԱՔԵԼԱՇՆՈՐՀ ԳԱՀԱԿԱԼՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Արշալույս հուր, լուսազգեստ զվարթուն,
Օր ցնծության, պատգամաբեր ոսկեխույր,
Տաճարներու երգ ու օրհնանք խնկաբույր
Կբարձրանան ահա երկինք աստղերուն:

Հայացք հևքոտ Այրարատյան աշխարհեն
Ակնկառույց սփյուռքն համայն կդիտեն:
Սրտեր վերքոտ խոր հրճվանքով հիասթափ
Կողջագուրվին սիրով արքշիռ հարազատ:

Թնդան, դղրդին խինդ ու ծիծաղ որդվոցդ, Հա՛յր.
Տարիներու երկար իղձ ու խունկ, Վեհափառ,
Ձերդ սրբանվեր սոսիներու ատրուշան
Սրտերնուն մեջն է բռնկեր բոց, սիրո Նշան:

Ահա ոտիցդ առջև, ժիր, կույս սրտերու
Երախայրիքն բերեր ենք Քեզ մենք ի ձոն,
Աղոթք, մրմունջք, ինչպես վարդեր լուսաբորբ
Բոլորվեր են հյուսկեն-հյուսկեն Վեհիդ շուրջ:

Ո՜հ, հանակ շունչ, կյանք են ատոնք սիրասուն,
Խունկը բուրյան Աստվածամոր խորանին,
Միլն ու ծաղիկը արցունքներու սրտաբուխ՝
Կուտ հավատքի վառ հույսերով ակաղձուն:

Օրհնե զանոնք, Հայր, աջիդ սուրբ օրհնանքին
Կարոտն ունին, մյուռոնաբույր Վեհափառ,
Սրտերով բուխ ու սիրակեզ հրճվագին
Մաղթեն, կեցցեք, կեցցեք տարիներ երկար:

Վերջում օրհնության խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՀԵՍԸՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ
(7 մայիսի 1981 թ.)

Սբ. պատարագեն հետո Ես կրկին ուրախ եմ ձեր մեջը գտնվելու այս սիրո սեղանին: Սիրո սեղանն ալ, տեսակ մը, սբ. պատարագի շարունակությունն է, քրիստոնեական ըմբռնումով: Անհավասիկ, վերջին պահերը կապրինք, դուք և Ես միասին, որովհետև քանի մը ժամեն Ես պետք է շարունակեմ Իմ ճանապարհորդությունը դեպի Ֆրանսիա: Մեկնելե առաջ կըրկին անգամ կուզեմ Իմ օրհնությունը բաշխել ամենքիդ: Կուզեմ նաև Իմ գնահատանքի խոսքը ուղղել այստեղի Եկեղեցական Վարչության, որի ատենապետը ժրաջան և բարեպաշտ տիար Բոյաջյանն է: Իմ գնահատանքի խոսքը նաև մյուս միություններուն, որոնց ներկայացուցիչները քիչ առաջ խոսք առին: Շատ լավ է, որ հայ կյանքը հետզհետե կազմակերպված է այստեղ, Եկեղեցին բոլորինն է: Բոլորդ Եկեղեցիին մեջ եք, բոլորդ հայկական կյանքի մեջ եք: Ինչպես ամեն գաղութներու մեջ, կան և պետք է ըլլան նաև մշակութային կամ հասարակական այլ կազմակերպություններ, ամեն մեկը իր ծրագրով, իր նպատակներով, սակայն Եկեղեցին բոլորինն է, հավասարապես և բոլորը առանց բացառության զավակներն են Հայ Առաքելական Եկեղեցիին: Եվ բոլորիդ նպատակը, անշուշտ, մեկ է, այն է՝ պահել-պահպանել հայությունը իր քրիստոնեական հավատքով, իր ազգային ավանդություններով, իր հայկական դիմագծությամբ և մայրենի լեզվով: Մեր Եկեղեցին մեզի համար Աստուծմե պարգևված սրբազան հաստատություն մըն է, որուն մեջ կենդանի կպահվի մեր ազգի հոգին, մեր ազգի ոգեկանությունը:

Հինգերորդ դարուն, 451 թվականին, երբ հազիվ հարյուր հիսուն տարիներ անցած էին այն օրեն, երբ քրիստոնեությունը արմատ ձգած էր մեր ազգի հոգիի մեջ, պարսիկները Հայաստանի վրա հարձակեցան մեկ նպատակ ունենալով՝ քրիստոնեական հավատքի արմատները դուրս պոկելու հայ ժողովրդի սրտեն:

Հայ իշխանները հայոց կաթողիկոսի նախագահությամբ ժողով գումարեցին և պատասխանեցին՝ Ոչ: Անոնք ուխտեցին հավատարիմ մնալ մեր քրիստոնեական հավատքին:

Այսպիսով Վարդանանց պատերազմը սկսավ Ավարայրի դաշտի վրա «Վասն հավատոյ և վասն հայրենեաց»: Ուրեմն տակավին հինգերորդ դարեն սկսյալ հայ ազգը իր ճակատագիրը անբաժանորեն կապած է իր հավատքին, իր Եկեղեցիին և իր հայրենիքին հետ: Մեր սուրբ Եկեղեցին ազգային է, մեր քրիստոնեական հավատքը անհայրենիք չէ: Ժողովուրդ, քրիստոնեական հավատք, մայր հայրենիք մեկ ամբողջություն կկազմեն: Այսպես ապրած ենք մենք հազար յոթ հարյուր տարիներե ի վեր, մինչև այսօր: Այդ ճանապարհով՝ ալ պիտի առաջ ընթանանք նաև հետայսու:

Այսօր մեր առջև սք. նպատակներ ունինք, մեր ազգը պահպանելու ամբողջ և անաղարտ և անբաժան իր բուն հայկական քրիստոնեական դիմագծով: Եվ տակավին մենք սպասելիքներ ունինք՝ ազգային երազանքները, որոնք ապագային անպայման պետք է արդարությամբ իրականանան:

Անհավասիկ մեր Եկեղեցվո առաքելությունը այսօրվան աշխարհի մեջ: Խորապես շնորհակալ եմ ձեր այս խանդավառ ընդունելություններեն թե Մյունխեն, և թե՛ այստեղ: Մենք երբեք չպիտի մոռնանք ձեզ, մենք երբեք չպիտի մոռնանք ձեր որդիական ջերմությունը, ձեր հավատարմությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ: Ձեզմե կբաժանվինք բոլորիդ բաշխելով Մեր հայրական սերը, Մեր շնորհակալությունը և Մեր օրհնությունը:

«Շնորհք և խաղաղութիւն ընդ ձեզ». ամեն: